Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 15.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 9-ի նյութական իրավունքի բաժնի 3"27-րդ, 5"9-րդ, 20.42-րդ, 35.45-րդ, 40.64-րդ հարցերը:

27-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները խնդրի ձևակերպման մեջ տեղ գտած անճշտության պարագայում, ընդունելի են հանձնաժողովի համար, ուստի տրվում է 1 միավոր:*

9-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի դրանք ՀՀ քրեական օրենսդրության նորմերի սխալ մեկնաբանության արդյունք են, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

42-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի նման որակման պայմաններում ծանր վնաս պատճառելուն քրեաիրավական գնահատական է տրվում երկու անգամ, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

45-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի տրվում է 1 միավոր:*

64-րդ հարցի *վերաբերյալ հանձնաժողովն արձանագրում է, որ թեև շարունակվող հանցագործությունը ենթադրում է նույնական արարքների կատարում, ինչը հավաստվել է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ, սակայն հաշվի առնելով այն, որ հափշտակության պարագայում դրանց եղանակների՝ մեկը մյուսին վերաճման հանգամանքը քննարկման առարկա չի դարձվել ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ, հիմք է տալիս ընդունելի համարել հավակնորդի կողմից դոկտրինալ աղբյուրներով հիմնավորված դիրքորոշումը, ուստի տրվում է 1 միավոր:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***2067*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն, նյութական իրավունքից ստացված 23 միավորը բարձրացնել 3 միավորով՝ արդյունքում արձանագրել 26 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ